Օրէնքները պահելու և հրատարակելու մասին. — *Ի փոփոխումն, լրացումն և վերացումն պատշաճաւոր օրէնքների՝ սահմանել:*

1) *Օրէնքների իսկականները պահւում են Հայաստանի Խորհրդում: Օրէնքի իսկականը համարւում է նրա այն օրինակը, որը պարունակում է օրէնքի Հայաստանի Խորհրդի կողմից հաստատւած վերջնական բնագիրը և վաւերացւած է Խորհրդի նախագահի և աւագ քարտուղարի ստորագրութիւններով:*

2) *Հայաստանի Խորհրդից հաստատւելուց յետոյ, օրէնքի պատճէն—օրինակները, վաւերացւած Խորհրդի աւագ քարտուղարից, Խորհրդի նախագահի կարգադրութեամբ ուղարկւում են «Օրէնքների Հաւաքածուում» տպագրելու և հրատարակելու:*

3) *«Օրէնքների Հաւաքածուի» տպագրութիւնն ու սրբագրութիւնը Հայաստանի Խորհրդի նախագահի վերին հսկողութեամբ ղեկավարում է նոյն Խորհրդի Դիւանի պատշաճաւոր պաշտօնեան, որը նշանակւում է նախագահից: «Օրէնքների Հաւաքածուի» համարների առաքումը ըստ պատկանելոյն կառավարութեան պարտականութիւնն է:*

(Հաստ. սեպտ. 24-ին 1918թ.)

Կարիք ունեցող գաղթականների խնամատարութեան մասին. — *Յօդ. ա. Կարիք ունեցող գաղթականներին օգնութիւն է տրւում աշխատանքի միջոցով:*

Ծանօթ. — *ա. Գաղթականին աշխատանք տալու անհնարինութեան կամ նրա աշխատանքի անընդունակութեան դէպքում նա ստանում է նպաստ:*

Ծանօթ. — *բ. Աշխատանքից հրաժարւող գաղթականը զրկւում է պետական նպաստ ստանալու իրաւունքից:*

Յօդ. բ. Հայաստանի սահմաններում գտնւած պետական ազատ հողերը տրւում են գաղթականներին մշակելու:

Ծանօթ. — *Նոյն նպատակով գաղթականներին են տրւում լքւած և անտէր հողեր:*

Յօդ. գ. Գաղթական իւրաքանչիւր ընտանիքին հող տրւում է աշխատաւոր ձեռքերի թւի համեմատ:

Յօդ. դ. Ամենևին հող չեն ստանում արհեստներով և առեւտրով զբաղւող, ինչպէս և հող ունեցող գաղթականները:

Յօդ. ե. Իւրաքանչիւր գոյք գաղթականին տրւում է մանրամասն ցուցակագրութեամբ. գոյքը փչացնելու համար գաղթականը ենթարկւում է օրինական պատասխանատուութեան:

Յօդ. զ. Հողից օգտւելու իրաւունք ստացած գաղթականը զրկւում է այդ իրաւունքից, եթէ նա մի ամսւայ ընթացքում չի գնում նշանակւած տեղը:

Յօդ. է. Գաղթականի ինքնութիւնը որոշւում է ընդհանուր հիմունքներով:

(Հաստ. սեպտ. 28-ին 1918թ.)

Կարիքաւոր գաղթականների համար ջուլհականոցներ բանալու մասին.—*Յօդ. 1) Կարիքաւոր գաղթականների, առաւելապէս կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ:*

Յօդ. 2) Այդ նպատակով և համաձայն սրանց հետ հաստատւած նախահաշիւի յատկացնել՝ 6,691,200ր. և մոնոպոլիզացիայի ենթարկւած բամբակից 85,700 փութ: